

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

«_____» _____ 2017 թ. N _____-Ն

**«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»**

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածի 1-ին մասը, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 4-րդ մասը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 685-րդ և 688-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 273.210.03507) վերակազմակերպել ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Մատենադարան)՝ վերակազմավորման ձևով:

2. Հաստատել՝ Մատենադարանի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

4. Մատենադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (այսուհետ՝ տնօրենի պաշտոնակատար) նշանակել Վահան Տեր-Ղևոնդյանին (անձնագիր՝ AM 0301120, տրված՝ 16.05 2011թ, 004-ի կողմից):

5. Առաջարկել տնօրենի պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովել Մատենադարանի պետական գրանցումը:

6. Սահմանել, որ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդն իր գործունեությունը կարող է շարունակել մինչև Մատենադարանի գիտական խորհրդի ձևավորումը:

7. «Մատենադարանի պետական գրանցումից հետո դադարեցնել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ

առևտրային կազմակերպության «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոն» մասնաճյուղի գործունեությունը:

8. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ սույն որոշման N 2 հավելվածում նշված անշարժ գույքը հետ վերցնել և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

9. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ սույն որոշման N 3 հավելվածում նշված պատմամշակութային նշանակություն ունեցող հավաքածուները (հին ձեռագրեր, նկարներ) անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Մատենադարանին:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնված՝ պետական սեփականություն հանդիսացող՝ սույն որոշման N 4 հավելվածում նշված գույքն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Մատենադարանին:

11. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերում նշված գործընթացի ավարտից հետո վեցամսյա ժամկետում Մատենադարանի հետ կնքել սույն որոշման N 4 հավելվածում նշված գույքի վերաբերյալ ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագրում սույն որոշումից բխող պայմանագրի փոփոխման մասին համաձայնագիր՝ դրանում նախատեսելով դրույթ այն մասին, որ այն կարող է լուծվել հիմնադրի կողմից՝ դրա մասին գրավոր ծանուցելով Մատենադարանին՝ նոտարական վավերացման, գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացնելով Մատենադարանի միջոցների հաշվին:

12. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

ա. ապահովել ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

սեփականության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը,

բ. հաստատել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ վիճարկվող) պարտավորությունների Մատենադարանին փոխանցման ակտը.

2) Մատենադարանի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում՝

ա. Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել Մատենադարանի հոգաբարձուների խորհրդի կազմը,

բ. ապահովել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող և *անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքը* Մատենադարանին փոխանցելու *հանձնման-ընդունման գործընթացը*:

13. Սահմանել, որ

1) Մատենադարանն «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավա-հաջորդն է, և նրան են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

2) պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև նվիրատվություն կամ նվիրաբերության պայմանագրով **պատմամշակութային նշանակություն ունեցող հավաքածուներ (հին ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, հնատիպ գրքեր, արվեստի գործեր՝ գեղանկարչական, խեցեգործական և այլն) ձեռք բերելիս Մատենադարանը հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ձեռք բերված պատմամշակութային նշանակություն ունեցող հավաքածուները հանդիսանում են պետական սեփականություն:**

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Մատենադարան) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, կրթական, մշակութային և այլ հանրագուտ նպատակներ:

2. Մատենադարանը «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03507) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):

3. Մատենադարանն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Մատենադարանի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն է:

5. Մատենադարանն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում:

6. Մատենադարանն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով), ձևաթղթեր, ինչպես նաև այլ անհատականացման միջոցներ:

7. Մատենադարանի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ.

2) հայերեն կրճատ՝ «Մատենադարան».

3) ռուսերեն լրիվ՝ Фонд "Научно-исследовательский институт древних рукописей "Матенадаран" им. Месропа Маштоца".

4) ռուսերեն կրճատ՝ "Матенадаран".

5) անգլերեն լրիվ՝ «Matenadaran» Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts» Foundation.

6) անգլերեն կրճատ՝ «Matenadaran».

8. Մատենադարանի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երեւան, 0009, Մեսրոպ Մաշտոցի 53,:

9. Մատենադարանի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության, ինչպես նաև արտերկրի գիտական, մշակութային և կրթական բնագավառներում գործող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

II. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

10. Մատենադարանի պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ, և գործում է անժամկետ:

11. Մատենադարանն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային և այլ հաշիվներ, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

12. Մատենադարանն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով: Մատենադարանը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ Մատենադարանի պարտավորությունների համար: Մատենադարանի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

13. Մատենադարանն իր գործունեության ընթացքում ստացված ամբողջ շահույթը պետք է օգտագործվի իր կանոնադրական նպատակների իրականացման համար: Մատենադարանն իր կանոնադրությանը համապատասխան՝

1) օգտագործում է հիմնադրի կողմից Մատենադարանին տրամադրված գույքը.

2) տնօրինում, օգտագործում և տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

III. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Մատենադարանի՝ իբրեւ գիտական կենտրոնի գործունեության նպատակներն են՝

1) հայերեն եւ այլալեզու հին ձեռագրերի, արխիվային վավերագրերի, հայագիտական գրականության ու մամուլի՝

ա. ձեռքբերումը, պահպանումը, վերանորոգումը, նմանատիպ վերարտադրությունը եւ հետազոտումը,

բ. պատճենահանումը, այդ թվում՝ թղթային, միկրոժապավենային, թվային (էլեկտրոնային) եւ ժամանակակից այլ հնարավոր ձեւաչափերով եւ տեսքով,

գ. պահպանման, վերականգնման սպասարկման եւ գիտահետազոտական համակարգերում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը,

դ. ձեռագրացուցակների, մատենագիտական ուղեցույցերի, գիտական հանդեսների, բնագրերի եւ ուսումնասիրությունների, ալբոմների, բուկլետների եւ այլ գիտական ու քարոզչական-գովազդային նյութերի պատրաստումն ու հրատարակումը.

2) հայագիտության եւ միջնադարագիտության բնագավառներում հիմնարար ծրագրերի եւ հետազոտությունների իրականացումը.

3) համանման գործունեություն ծավալվող օտարերկրյա գիտական շրջանակների (այդ թվում՝ կազմակերպությունների եւ ֆիզիկական անձանց) հետ փոխշահավետ կապի հաստատումը, զարգացումը, փորձի փոխանակումը, համագործակցությունը.

4) գիտական կադրերի պատրաստումը:

15. Մատենադարանն իր առջեւ դրված խնդիրների իրագործման նպատակով՝

1) կազմակերպում է հայերեն եւ այլալեզու հին ձեռագրերի, արխիվային վավերագրերի, հայագիտական գրականության ու մամուլի վերաբերյալ գիտական խորհրդակցություններ, սեմինարներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ եւ այլ համանման միջոցառումներ.

2) իրականացնում է գիտակրթական և ուսումնամեթոդական գործառույթներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կազմակերպել գիտական աստիճան շնորհվող մասնագիտական խորհուրդ.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց հետ կնքում է պայմանագրեր:

IV. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԸ

16. Հիմնադրի կողմից Մատենադարանին հանձնված գույքը Մատենադարանի սեփականությունն է: Մատենադարանը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով: Մատենադարանի սեփականություն ըհանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքի 20 տոկոսը գերազանցող գործարքները կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ:

17. Պատմամշակութային նշանակություն ունեցող հավաքածուները (հին ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, հնատիպ գրքեր, արվեստի գործեր՝ գեղանկարչական, խեցեգործական և այլն), այդ թվում Մատենադարանի գործունեության ընթացքում ձեռք բերված ու ձեռք բերվող կամ Մատենադարանին տրամադրված /նվիրատվությամբ, նվիրաբերությամբ/, ենթակա չեն օտարման, ինչպես նաև այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները այլ անձանց փոխանցման, գրավադրման կամ այլ եղանակով տնօրինման:

18. Մատենադարանի գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

1) հիմնադրի կամավոր ներդրումները.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամական մուտքերը.

3) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները.

4) Մատենադարանի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

5) դրամաշնորհները.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

Սույն կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված դրամական միջոցների և գույքի համար Մատենադարանը վարում է առանձնացված հաշվառում՝ դրանց վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված և իր կողմից ներկայացվող հաշվետվություններում:

19. Մատենադարանի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, Մատենադարանի մարմինների անդամների, ինչպես նաև Մատենադարանի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Մատենադարանի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Մատենադարանի մարմինների անդամները, ինչպես նաև Մատենադարանի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

20. Մատենադարանի կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների, ապրանքների և իր կարիքների համար գնումներն իրականացվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

V. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Մատենադարանը, իր կանոնադրական նպատակներին համապատասխան, իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

3) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

4) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը.

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքելու պայմանագրեր.

6) իրեն օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հանձնել վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հանձնված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքի:

7) Մատենադարանի հիմնական և ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով պայմանագրային կարգով ներգրավելու այլ անձանց կողմից տրամադրվող

միջոցներ, ընդ որում, առանց հիմնադրի որոշման՝ բացառելու հիմնադրի կողմից Մատենադարանի օգտագործմանը հանձնված գույքի, այդ թվում՝ շենքերի, շինությունների և հողատարածքների գրավադրումը, օտարումը կամ անհատույց օգտագործման հանձնումը.

8) իրականացնելու հրատարակչական, տպագրական գործունեություն.

9) իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն:

22. Մատենադարանը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Մատենադարանը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

23. Մատենադարանը *իրավունք* ունի անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) ցուցահանդեսային գործունեություն,

2) ձեռագրերի, արխիվային վավերագրերի և հայագիտական գրականության ու մամուլի թարգմանություն՝ օտար լեզուներով,

3) ձեռագրերի, արխիվային վավերագրերի և հայագիտական գրականության ու մամուլի թվայնացման և վերանորոգման աշխատանքների իրականացում,

4) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,

5) գիտական հետազոտությունների և մշակումների իրականացում,

6) փորձարարական, փորձագիտական ծառայությունների մատուցում,

7) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում, դրա արդյունքների իրացում, գրքերի և այլ տպագրական նյութերի վաճառքի իրականացում,

8) հուշանվերների իրացում,

9) աշխատողների, ինչպես նաև Մատենադարանի այցելուների, կազմակերպվող միջոցառումների մասնակիցների հանրային սննդի կազմակերպում և սպասարկում,

24. Մատենադարանը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

25. Իր առջև դրված նպատակների արդյունավետ իրականացումն ապահովելու համար Մատենադարանը՝

1) ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար.

2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային տնտեսական ու ֆինանսական կառույցների, գործակալությունների և հիմնադրամների հետ.

3) իր կանոնադրական նպատակների իրագործման համար իրականացնում է այլ միջոցառումներ:

26. Մատենադարանը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում, անցնել տարեկան աուդիտ՝ Մատենադարանի հոգաբարձուների խորհրդի կողմից ընտրված աուդիտորական կազմակերպության կողմից.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն և վիճակագրական հաշվետվություն ներկայացնել պետական մարմիններ.

4) յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ Մատենադարանը <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել՝

ա. հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը, որի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, տնօրենի և Մատենադարանի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են Մատենադարանի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում. Հաշվետվությունն հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Մատենադարանը այդ մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

բ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե Մատենադարանի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը:

5) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

VI. ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ ԿՈՒՎՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

27. Մատենադարանի կառավարման մարմիններն են՝

1) Մատենադարանի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ),

2) Մատենադարանի տնօրենը:

28. Մատենադարանի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է: Խորհուրդը բաղկացած է 19 անդամից: Խորհրդի անհատական կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ներկայացմամբ: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը խորհրդի անդամ է ի պաշտոնե, մեկական ներկայացուցիչ նշանակվում է՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունից, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայից, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններից, Հայաստանի Ազգային գրադարանից, կրթության և գիտության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կամ բարեգործական կազմակերպություններից և 10 անդամ Մատենադարանից:

29. Խորհրդի լիազորություններն սկսվում են Մատենադարանի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից, իսկ եթե նշանակվել են Մատենադարանի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից:

30. Խորհրդի անդամները չեն կարող լինել Մատենադարանի մեկ այլ մարմնի անդամ:

31. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ ու որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ Մատենադարանի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին.

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում.

5) համակարգելու Մատենադարանի նպատակներին վերաբերող Մատենադարանի գործունեության տարբեր ոլորտների կամ ուղղությունների աշխատանքը:

32. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել խորհրդի նիստերին,

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Մատենադարանի շահերից:

33. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

34. Խորհրդի անդամի լիազորության դադարման դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով՝ ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Մատենադարանի տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Մատենադարանի տնօրենը տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին:

35. Խորհրդի իրավասություններն են՝

1) Մատենադարանի նպատակների իրականացման տարեկան և միջանկյալ ծրագրերի քննարկումն ու հաստատումը, դրանց կատարման նկատմամբ վերահսկումը, ծրագրերի իրականացման վերաբերյալ ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների քննարկումն ու հաստատումը.

2) Մատենադարանի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Մատենադարանի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հաստատումը.

3) Մատենադարանի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

4) Մատենադարանի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

5) Մատենադարանի գույքի տնօրինման, պատմամշակութային նշանակություն ունեցող հավաքածուների ձեռքբերման, պահպանման, վերանորոգման, վերականգնման սպասարկման,

թվայնացման, պատճենահանման, պատճենները այլ կազմակերպությունների տրամադրման կարգերի հաստատումը.

6) Մատենադարանի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) Մատենադարանի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) Մատենադարանի տնօրենի ընտրությունը և նրա պաշտոնից ազատելը.

10) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի) և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

11) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Մատենադարանի տնօրենի հաշվետվությունների լսումը և հաստատումը.

12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

13) Մատենադարանի կառուցվածքի հաստատումը.

14) Մատենադարանի հաստիքացուցակի հաստատումը.

15) Խորհրդակցական այլ մարմինների ձևավորումը.

16) Մատենադարանի կողմից կնքվող ցանկացած գործարքի՝ ներառյալ փոխկապակցված գործարքների հաստատումը, որոնց գումարը գերազանցում է 20,000,000 դրամը.

17) Մատենադարանի աշխատանքային ներքին կանոնակարգի հաստատումը.

18) Մատենադարանի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

19) Մատենադարանի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

20) օրենքով, սույն կանոնադրությամբ սահմանված, ինչպես նաև Մատենադարանի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

36. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերում Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ ավելի մեծ թվով ձայներ նախատեսված չեն:

37. Մատենադարանի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Մատենադարանի անվանման փոփոխության, վերակազմակերպման, լուծարման և

կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման վերաբերյալ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

38. Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

39. Խորհրդի նախագահը՝

1) ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ.

2) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր՝ օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով նախատեսված, Մատենադարանի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) իրականացման և առաջին մասի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

3) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

4) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

5) որոշում է խորհրդի անդամների աշխատանքի համակարգման ոլորտները կամ ուղղությունները.

6) Մատենադարանի անունից աշխատանքային պայմանագիր է ստորագրում Մատենադարանի տնօրենի հետ.

7) խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ՝ օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

40. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

41. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը խորհրդի նախագահի կողմից կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

Խորհրդի նիստերին խորհրդի նախագահի հրավերով կարող են մասնակցել համապատասխան ծրագրերի իրականացման պատասխանատուներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի նիստերի արձանագրությունները ենթակա են ստորագրման՝ խորհրդի նախագահի և տվյալ նիստին մասնակցող խորհրդի բոլոր անդամների կողմից:

42. Եթե սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

43. Մատենադարանի տնօրենը ղեկավարում է Մատենադարանի ընթացիկ գործունեությունը: Նրա իրավասությանն են պատկանում Մատենադարանի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

44. Մատենադարանի տնօրենը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը, տարեկան մեկ անգամ խորհրդին ներկայացնում է հաշվետվություններ:

45. Մատենադարանի տնօրենը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է խորհրդի կողմից՝ բաց մրցույթով: Մրցույթի իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են խորհրդի կողմից:

46. Մատենադարանի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Մատենադարանի անունից պայմանագիրն ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

47. Մատենադարանի տնօրենը՝

1) տնօրինում է Մատենադարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Մատենադարանի անունից.

2) ներկայացնում է Մատենադարանը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է Մատենադարանի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Մատենադարանի աշխատանքային ներքին կանոնակարգը, վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

10) կնքում է պայմանագիր ընտրված աուդիտորական կազմակերպության հետ:

11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Մատենադարանի աշխատողներին, այդ թվում՝ Մատենադարանի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

48. Խորհուրդն իրավունք ունի լուծելու Մատենադարանի տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

VII. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

49. Մատենադարանի գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը, գիտական գործունեության հիմնական ուղղությունները, գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման, գիտական աշխատությունների հրատարակման գործառույթները կանոնակարգելու նպատակով Մատենադարանում ստեղծվում է գիտական խորհուրդ:

50. Գիտական խորհրդի գործունեության կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ և Մատենադարանի խորհրդի կողմից հաստատված գործունեության կանոնակարգով:

51. Գիտական խորհրդի կազմը սահմանվում է Մատենադարանի խորհրդի կողմից: Գիտական խորհրդի նախագահը Մատենադարանի տնօրենն է, իսկ քարտուղարը՝ Մատենադարանի գիտնական քարտուղարը:

52. Գիտական խորհուրդը՝

1) քննարկում և տալիս է համաձայնություն Մատենադարանի գիտական գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

2) քննարկում և հաստատում է գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման, գիտական աշխատությունների հրատարակման, խորհրդակցությունների ու նստաշրջանների պլանների նախագծերը.

3) քննարկում և հաստատում է Մատենադարանի գիտական ու գիտակազմակերպչական գործունեության արդյունքների մասին հաշվետվությունները.

4) քննարկում է կարևորագույն գիտական հիմնախնդիրները, գիտական զեկուցումները և հաստատում Մատենադարանի գիտական աշխատանքների արդյունքները.

5) քննարկում է Մատենադարանի միջազգային գիտական համագործակցության հարցերը, օտարերկրյա գիտական հիմնարկների հետ համատեղ տարվող հետազոտությունների կատարման ընթացքը, ինչպես նաև լսում Մատենադարանի աշխատողների հաշվետվություններն արտասահմանյան գիտական գործուղումների մասին:

6) քննարկում է գիտական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման հետ կապված հարցերը, պարբերաբար լսում գիտնականների հաղորդումները գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին, քննում և հաստատում է ասպիրանտների ու գիտական աստիճան հայցողների թեկնածուական ատենախոսությունների թեմաները, տալիս է դրանց վերաբերյալ երաշխավորություններ:

7) իր գործունեության ոլորտի բարձրարժեք գիտական աշխատությունները, գիտական հայտնագործություններն ու գյուտերն առաջադրում է պետական և այլ մրցանակների շնորհման:

53. Գիտական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է տարեկան հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Տարեկան նիստերը հրավիրվում են առնվազն տարեկան երկու անգամ՝ յուրաքանչյուր տարվա առաջին և չորրորդ եռամսյակների ընթացքում: Արտահերթ նիստեր գումարվում են գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով կամ խորհրդի նախագահի որոշմամբ:

54. Գիտական խորհուրդն իրավասու է որոշումներ ընդունելու, եթե նիստին ներկա է նրա կազմի առնվազն կեսից ավելին:

55. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այլ որոշում չի ընդունել:

56. Գիտական խորհրդի որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց օգտին քվեարկել է գիտական խորհրդի՝ նիստին մասնակցած անդամների ծայների պարզ մեծամասնությունը:

VIII. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

57. Մատենադարանն ինքնուրույն է պլանավորում իր գործունեությունը, մշակում զարգացման հեռանկարները և ընդունում իր գործունեության վերաբերյալ որոշումներ:

58. Մատենադարանի՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ գործունեության ընթացքում բոլոր հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով:

Մատենադարանն ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան և պայմանները:

59. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս՝ Մատենադարանին իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

IX. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

60. Մատենադարանի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել կարող է ինչպես Մատենադարանի հիմնադիրը, այնպես էլ՝ Մատենադարանի հոգաբարձուների խորհուրդը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Մատենադարանի կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները չեն կարող վերաբերել Մատենադարանի նպատակներին կամ շահառուներին:

X. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Մատենադարանի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

62. Մատենադարանը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

63. Մատենադարանը վերակազմակերպվում է հիմնադրի որոշմամբ կամ խորհրդի որոշմամբ:

64. Մատենադարանը, միաձուլման ձևով վերակազմակերպվելիս, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված հիմնադրամի պետական գրանցման պահից:

65. Մատենադարանն այլ հիմնադրամի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս՝ դրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած հիմնադրամի գործունեության դադարման պետական գրանցման պահից:

66. Մատենադարանի վերակազմակերպման մասին որոշման ընդունումից հետո 30 օրվա ընթացքում Մատենադարանի պարտավոր է դրա մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին: Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ վերակազմակերպման

մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև Մատենադարանի պարտավորությունների իրավահաջորդության մասին:

67. Վերակազմակերպման մասին ծանուցման պահից 30 օրվա ընթացքում՝ վերակազմակերպվող Մատենադարանի պարտատերն իրավունք ունի Մատենադարանից պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

68. Մատենադարանը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

69. Մատենադարանը կարող է լուծարվել, եթե՝

1) Մատենադարանի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) իր գործունեությամբ Մատենադարանը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել Մատենադարանի նպատակների իրականացմանը և փոփոխել այդ նպատակները.

4) Մատենադարանի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) Մատենադարանը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) Մատենադարանն ստեղծելիս՝ հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

70. Մատենադարանը կարող է լուծարվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

71. Դատարանի կողմից Մատենադարանի լուծարման մասին որոշման ընդունումից հետո խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ու «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, սահմանում է լուծարման կարգն ու ժամկետները:

72. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Մատենադարանի գործերի կառավարման լիազորությունները: Մատենադարանի անունից դատարանում հանդես են գալիս լուծարման հանձնաժողովի ներկայացուցիչները:

73. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

74. Լուծարման հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.azdarar.am>) զետեղում է հայտարարություն Մատենադարանը լուծարելու և պարտատերերի պահանջները ներկայացնելու կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսվանից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Մատենադարանի լուծարման գործընթացի սկիզբ:

75. Լուծարման հանձնաժողովը վերագնահատում է գույքը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման համար, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում է Մատենադարանի լուծարման մասին:

76. Լուծարման ընթացքում Մատենադարանն իրավունք ունի կնքելու նոր գործարքներ և ստանձնելու նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

77. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացվելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը պարունակում է տեղեկություններ լուծարվող Մատենադարանի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

78. Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է Մատենադարանի խորհուրդը:

79. Լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումից հետո, եթե լուծարվող Մատենադարանի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով վաճառում է Մատենադարանի գույքը:

80. Լուծարման հանձնաժողովը լուծարվող Մատենադարանի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և լուծարման միջանկյալ հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

81. Պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Մատենադարանը չունի

պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Մատենադարանի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

82. Մատենադարանի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում խորհրդին՝ հաստատման: Լուծարման հանձնաժողովը խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարան՝ հաստատման:

83. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռը՝ օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ միասին, ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ Մատենադարանի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

84. Մատենադարանի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ լուծարման պետական գրանցման պահից:

85. Խորհրդի կողմից սույն կանոնադրության 71-րդ, 78-րդ և 82-րդ կետերով սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշիռը և լուծարման հաշվեկշիռը ներկայացվելու պահից) չկատարվելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը Մատենադարանի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ:

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Շենքերի և շինություննե րի անվանումը	Գտնվելու վայրը	Շահա- գործ- ման տարե- թիվը	Մակերեսը (քառ. մետր)	Սկզբնական արժեքը (ՀՀ դրամ)	Մաշվածու- թյունը (ՀՀ դրամ)	Հաշվեկշռայ ին արժեքը (ՀՀ դրամ)	Սեփականության իրավունքի գրանց- ման վկայականի տալու տարին, ամսա- թիվը և համարը	Հողա մաս /հա/	Վիճա կը	Այլ նշումն եր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Մատենադա րան	ք.Երևան, Կենտրոն Մաշտոց պողոտա 53 Մատենադա րան	1957	3538.67	1306525600	480555600	825970000	15.06.2016 N 15062016-01-0191 /ՀՀ սեփականություն/	2.953883	լավ	
1.1	Երկրորդ մասնաշենք		2011	8897.72 այդ թվում նկուղ 1104	4385314500	0	4385314500			լավ	
1.2	Կաթսայա տուն		1996	300.95	83579300	70374000	13205300			լավ	
1.3	Չորրորդ մասնաշենք		1987	642.07	146892900	49345600	97547300			վատ	

Ց Ո Ւ Ց Ա Կ

**«ԱՄՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
 ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՄՐԱՅՎԱԾ ԳՈՒՅՔԻ**

	Հավաքածուի անվանումը	Գույքամատյանների քանակը	Հավաքածուի միավորները
Ա.	ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ	45	18645
Բ.	ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ	106	508.700
Գ.	ՏՊԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ	72	109.047
Դ.	ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ	19	20.504
Ե.	ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅԼ ԱՐԺԵՔՆԵՐ		75
Զ.	ԲՈԼՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ	242	656.971

Ց ՈՒ Ց Ա Կ

**«ԱՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
 ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

NN ը/կ	Շենքերի և շինություն ների անվանում ը	Գտնվելու վայրը	Շահ ա- գործ- ման տար ե- թիվը	Մակերես ը (քառ. մետր)	Սկզբնակ ան արժեքը (ՀՀ դրամ)	Մաշվածու -թյունը (ՀՀ դրամ)	Հաշվեկշռա յին արժեքը (ՀՀ դրամ)	Սեփականությ ան իրավունքի գրանցման վկայականի տալու տարին, ամսաթիվը և համարը	Հողա մաս /հա/	Վիճակը	Այլ նշումներ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Մատենադա րան	ք.Երևան, Կենտրոն Մաշտոց պողոտա 53 Մատենադա րան	1957	3538.67	1306525600	480555600	825970000	15.06.2016 N 15062016-01- 0191 /ՀՀ սեփականություն/	2.953883	լավ	
1.1	Երկրորդ մասնաշենք		2011	8897.72 այդ թվում նկուղ 1104	4385314500	0	4385314500			լավ	
1.2	Կաթսայա տուն		1996	300.95	83579300	70374000	13205300			լավ	
2.	Չորրորդ մասնաշենք		1987	642.07	146892900	49345600	97547300			վատ	

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի վերակազմավորելու անհրաժեշտությունը պայմանավորված է Մատենադարանի զարգացման ծրագրերի իրականացման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու հանգամանքով:

Կարգավիճակի փոփոխությունը կնպաստի Մատենադարանի կառավարման արդյունավետության բարձրացմանը, տարբեր աղբյուրներից, այդ թվում նաև Սփյուռքից ներդրումների ապահովմանը:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

Առկա կազմակերպատիրավական (որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն) կարգավիճակը հնարավորություն չի ընձեռում Մատենադարանում ծավալել լրացուցիչ ներդրումներ պահանջող աշխատանքներ, դրանցում ներգրավելով սփյուռքահայ և տեղական բարձրորակ մասնագետների, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսավորման համար նախաձեռնել ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն:

Կազմակերպատիրավական կարգավիճակի փոփոխությունը լայն հնարավորություն կտա ավելի ճկուն, ազատ, արդյունավետ օգտագործել ֆինանսական միջոցները, իրականացնել բազմաթիվ ներդրումային ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեության այլ տեսակներ՝ հրատարակչական գործ, ցուցահանդեսային գործունեություն, ձեռագրերի, արխիվային վավերագրերի և հայագիտական գրականության ու մամուլի թարգմանություն, ձեռագրերի, արխիվային վավերագրերի ու մամուլի թվայնացման աշխատանքներ: Պետք է նաև նկատի առնել, որ հիմնադրամի կարգավիճակը ենթադրում է ավելի բարձր ինքնուրույնություն և ինքնակառավարում՝ ի դեմս հոգաբարձուների խորհրդի:

Այսպիսով, վերակազմավորելու հիմնական նպատակը Մատենադարանի ինքնավարության առավել բարձր մակարդակ ապահովելն է, ինչը կխթանի հայերեն և այլալեզու հին ձեռագրերի, արխիվային վավերագրերի, հայագիտական գրականության ու մամուլի ձեռքբերմանը, պահպանմանը, վերանորոգմանը, նմանատիպ վերարտադրությանը և հետազոտմանը, ինչպես նաև դրանց պատճենահանմանը, այդ թվում՝ թղթային, միկրոժապավենային, թվային (էլեկտրոնային) և ժամանակակից այլ հնարավոր ձեռաչափերով և տեսքով, հնարավորություն կտա գիտական կադրերի պատրաստմանը, հայագիտական նշանակության, հայրենագիտական բնույթի հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ներգրավմանը, կառավարման գործընթացի թափանցիկությանը և հաստատության գործունեության հաշվետվողականության բարձրացմանը:

Ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է, որ հիմնադրամի կարգավիճակ ստացած Մատենադարանը կդառնա տեխնիկապես հագեցած, ինքնավարության առավել բարձր մակարդակ ունեցող, ձեռնարկատիրական գործունեության տեսակներ՝ հրատարակչական գործ, ցուցահանդեսային գործունեություն, ձեռագրերի, արխիվային վավերագրերի և հայագիտական գրականության ու մամուլի թարգմանություն, վերանորոգում, հետազոտություն և թվայնացման աշխատանքներ իրականացնող, գիտական կադրեր պատրաստող գիտական կենտրոն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի վերակազմավորելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի վերակազմավորելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓՈԹԵՐԹ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ
ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ
ԵՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ
ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրությանստացման անամսաթիվը, գրությանհամարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ մշակույթի նախարարություն 2017-04-14 թիվ 05/1.1/2038-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		

<p>2.</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-04-21 թիվ 01.1/83- 2/6997-17</p>	<p>«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) հիմնադրամի վերակազմավորելու գործընթացը ընդունելի չենք համարում, քանի որ կազմակերպության կարգավիճակի փոփոխությունն առաջացնում է լրացուցիչ ռիսկեր հանրային ակտիվների կառավարման, հանրային ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման ոլորտում: Մասնավորապես.</p> <p>1. Կազմակերպության գույքի մասով՝ համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպության ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար, մինչդեռ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի N 1648-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ՊՈԱԿ-ները չեն կարող ներգրավել և տրամադրել վարկեր կամ փոխառություններ, մինչդեռ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով հիմնադրամների համար նման սահմանափակում չկա: Արդյունքում նվազում է հատկացված պետական գույքի «պաշտպանվածության» աստիճանը:</p>	<p>1. Չի ընդունվում</p>	<p>1.Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակի փոփոխությունից հետո չի առաջացնում ռիսկեր՝ ամրացված գույքի մասով, քանի որ հիմնադրամի կանոնադրությամբ, ինչպես նաև հետագայում կնքվող անհատույց օգտագործման այնանագրերում կարգադրվում է տրամադրված գույքի օգտագործման կարգը:</p>
-----------	---	--	-------------------------	---

		<p>1. Ձեռնարկատիրական գործունեության մասով՝ ներկայացված հիմնավորումը, որ կազմակերպարավական կարգավիճակի փոփոխությունը լայն հնարավորություն կտա իրականացնել ձեռնարկատիրական գործունեության այլ տեսակներ, ընդունելի չէ, քանի որ, ՀՀ-ում գործող հիմնադրամները, ինչպես նաև ՊՈԱԿ-ները, հանդիսանում են ոչ առևտրային կազմակերպություններ, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նշենք նաև, որ Նախագծի հիմնավորման մեջ թվարկված ձեռնարկատիրական գործունեության տեսակներն արդեն իսկ սահմանված են ՊՈԱԿ-ի կանոնադրությունում (ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 705-Ն որոշում):</p> <p>3. Կառավարման մարմինների մասով՝ հայտնում ենք, որ թեև ինչպես հիմնադրամի, այնպես էլ ՊՈԱԿ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության, սակայն հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, մինչդեռ ՊՈԱԿ-ի դեպքում կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը: Ի տարբերություն հիմնադրամի՝ ՊՈԱԿ-ի հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք:</p>	<p>2. Չի ընդունվում</p> <p>3. Չի ընդունվում</p>	<p>2. Նախագիծը մշակելիս առաջնորդվել ենք արդեն իսկ վերակազմակերպված հիմնադրամներում գործող կանոնադրությունների համապատասխան կետերով:</p> <p>3. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը կազմում 50 տոկոսը հիմնադիրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներն են:</p>
3.	<p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա 2017-04-14 թիվ 24-01/157</p>	<p>Առաջարկություններ և դիտողություններ չկան</p>		
4.	<p>ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե 2017-04-18 թիվ 01/3-1/12815-17</p>	<p>Առաջարկություններ և դիտողություններ չկան</p>		

<p>5.</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն 2017-05-12 թիվ 13/7774-17</p>	<p>1. Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով (5-րդ կամ 9-րդ կետից հետո). «Մատենադարանի պետական գրանցումից հետո դադարեցնել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոն» մասնաճյուղի գործունեությունը:</p> <p>2. Նախագծի թիվ 1 հավելվածի (այսուհետ՝ կանոնադրություն) 1-ին կետում «այսուհետ՝ Մատենադարան» բառերից հետո ավելացնել «կամ Հիմնադրամ» բառերը:</p> <p>3. Կանոնադրության 8-րդ կետում նշել գտնվելու վայրի փոստային դասիչը՝ 0009:</p> <p>4. Կանոնադրության 9-րդ կետը հանել, քանի որ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը:</p> <p>5. Կանոնադրության 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «10. Մատենադարանի շահառուներն են՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների, ինչպես նաև արտերկրի գիտական, մշակութային և կրթական բնագավառներում գործող ֆիզիկական և իրավաբանական անձինք:</p> <p>6. Կանոնադրության 20-րդ կետից հանել «Մատենադարանի հիմնադիրները,» բառերը:</p> <p>7. Կանոնադրության 24-րդ կետի 1-ին ենթակետը անհրաժեշտ է հանել՝ 7-րդ ենթակետի կրկնությունից խուսափելու համար:</p> <p>8. Կանոնադրության 24-րդ կետի 10-րդ ենթակետը հանել, քանի որ նշվածը ձեռնարկատիրական գործունեության տեսակ չէ, իսկ 5 և 6-րդ ենթակետերում նշված ձեռնարկատիրական գործունեության տեսակները համապատասխանեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով սահմանված Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակներին:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p> <p>5. Ընդունվել է</p> <p>6. Ընդունվել է</p> <p>7. Ընդունվել է</p> <p>8. Ընդունվել է</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>2. Նախագծի թիվ 1 հավելվածում «Հիմնադրամ» բառի փոխարինվել է «Մատենադարան» բառով</p> <p>3. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>4. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>5. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>6. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>7. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>8. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
-----------	--	---	---	--

		<p>9. Կանոնադրության 27-րդ կետի 4-րդ ենթակետի ա. պարբերությունում «կառավարչի» բառը փոխարեն «տնօրենի» բառով:</p> <p>10. Կանոնադրության 36-րդ կետի 9-րդ ենթակետից և 38-րդ կետից հանել «մասնաճյուղի ղեկավարի» բառերը, քանի որ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը:</p> <p>11. Կանոնադրության 48-րդ կետի 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Մատենադարանի աշխատողներին, այդ թվում՝ Մատենադարանի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին:»</p> <p>12. Կանոնադրության 61-րդ կետից հանել «ձեռնարկատիրական գործունեության նոր տեսակներ սահմանել» բառերը քանի որ համաձայն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1՝ կետի հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը վերապահված է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին:</p> <p>13. Կանոնադրությամբ սահմանված չէ հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության կարգը:</p> <p>14. Կանոնադրության կետերի հերթական համարները ճշտել:</p>	<p>9. Ընդունվել է</p> <p>10. Ընդունվել է</p> <p>11. Ընդունվել է</p> <p>12. Ընդունվել է</p> <p>13. Ընդունվել է</p> <p>14. Ընդունվել է</p>	<p>9. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>10. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>11. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>12. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>13. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>14. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	---	--	--

<p>6. ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017-05-17 թիվ 01/22.22/3005-17</p>	<p>1. Որոշման նախագծի 8-րդ կետը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, 5-րդ և 6.2-րդ կետերով սահմանված պահանջներին,</p> <p>2. Որոշման նախագծի 9-րդ կետում <8-րդ կետում> բառերը փոխարինել <2-րդ և 5-րդ կետերում> բառերով, իսկ <Հիմնադրամի> բառը փոխարինել <Մատենադարան> բառով, քանի որ Նախագծի խմբագրությունում հիմնադրամը հիշատակվում է որպես Մատենադարան,</p> <p>3. հաշվի առնելով, որ Որոշման նախագծով պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվում է հիմնադրամի, անհրաժեշտ է Նախագծում նախատեսել նաև դրույթ՝ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի <<Մատենադարան> Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1885-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 705-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին և նշվածի հիմքով Որոշման նախագծի նախաբանում հղում կատարել նաև <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին, իսկ վերնագիրը համապատասխանեցնել սույն կետով շարադրված առաջարկին:</p>	<p>1. Չի ընդունվել</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. Չի ընդունվել</p>	<p>1. Նշված որոշման կարգի համաձայն անհատույց տարածք է տրվում այն հիմնադրամներին, որոնց հիմնադիրը ՀՀ կառավարությունը չի հանդիսանում:</p> <p>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>3. «Մատենադարան» Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ը իր գործունեությունը շարունակելու է մինչև հիմնադրամի գրանցումը:</p>
--	---	---	--

<p>7.</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն 2017-05-17 թիվ 01/14/8108-17</p>	<p>1. Նախագծի 1-ին կետում «այսուհետ՝ Մատենադարան» բառերն անհրաժեշտ է նշել ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի» բառերից հետո:</p> <p>2. Նախագծի 5-րդ կետում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթները:</p> <p>3. Նախագիծն անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով (5-րդ կամ 9-րդ կետից հետո). «Մատենադարանի պետական գրանցումից հետո դադարեցնել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոն» մասնաճյուղի գործունեությունը:</p> <p>4. Նախագծի 9-րդ կետում և նախագծի N1 հավելվածով հաստատված կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրությանուն) 2-րդ կետում «Հիմնադրամը» բառն անհրաժեշտ է փոխարինել «Մատենադարանը» բառով՝ նկատի ունենալով նախագծի 1-ին կետի և կանոնադրության 1-ին կետի դրույթները:</p> <p>5. Կանոնադրության 8-րդ կետում անհրաժեշտ է նշել գտնվելու վայրի փոստային դասիչը՝ 0009:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p> <p>5. Ընդունվել է</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>3. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>4. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>5. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
-----------	---	---	---	--

		<p>6. Կանոնադրության 9-րդ կետն անհրաժեշտ է հանել, քանի որ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն է պատկանում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը:</p> <p>7. Կանոնադրության 10-րդ կետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«10. Մատենադարանի շահառուներն են՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների, ինչպես նաև արտերկրի գիտական, մշակութային և կրթական բնագավառներում գործող ֆիզիկական և իրավաբանական անձինք:</p> <p>8. Կանոնադրության 20-րդ կետից անհրաժեշտ է հանել «Մատենադարանի հիմնադիրները,» բառերը:</p> <p>9. Կանոնադրության 24-րդ կետի 1-ին ենթակետն անհրաժեշտ է հանել՝ կանոնադրության 7-րդ ենթակետի կրկնությունից խուսափելու համար՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի դրույթները:</p> <p>10. Կանոնադրության 24-րդ կետի 10-րդ ենթակետն անհրաժեշտ է հանել, քանի որ ձեռնարկատիրական գործունեության տեսակները պետք է նշվեն սպառիչ ձևով, իսկ 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված ձեռնարկատիրական գործունեության տեսակները համապատասխանեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով սահմանված Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակներին:</p> <p>11. Կանոնադրության 27-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունում «կառավարչի» բառն անհրաժեշտ է փոխարինել «տնօրենի» բառով՝ նկատի ունենալով կանոնադրության 28-րդ կետի դրույթները:</p>	<p>6. Ընդունվել է</p> <p>7. Ընդունվել է</p> <p>8. Ընդունվել է</p> <p>9. Ընդունվել է</p> <p>10. Ընդունվել է</p> <p>11. Ընդունվել է</p>	<p>6. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>7. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>8. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>9. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>10. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>11. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	---	---	---

		<p>12. Կանոնադրության 36-րդ կետի 9-րդ ենթակետից և 38-րդ կետից անհրաժեշտ է հանել «մասնաճյուղի ղեկավարի» բառերը, քանի որ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը:</p> <p>13. Կանոնադրության 48-րդ կետի 11-րդ ենթակետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Մատենադարանի աշխատողներին, այդ թվում՝ Մատենադարանի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին:»</p> <p>14. Կանոնադրության 61-րդ կետից անհրաժեշտ է հանել «,ձեռնարկատիրական գործունեության նոր տեսակներ սահմանել» բառերը, քանի որ համաձայն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 11 կետի՝ հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը վերապահված է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին:</p> <p>15. Կանոնադրության 40-րդ կետում սահմանվում են խորհրդի նախագահի լիազորությունները, մինչդեռ կանոնադրությամբ սահմանված չէ Մատենադարանի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության կարգը:</p>	<p>12. Ընդունվել է</p> <p>13. Ընդունվել է</p> <p>14. Ընդունվել է</p> <p>15. Ընդունվել է</p>	<p>12. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>13. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>14. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>15. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	--	---	---